Հովարդ Լավկրաֆտ

Ուլտարի կատուները

Ասում են՝ Ուլտարում, որ Սկայ գետից այն կողմ է, մարդը չի համարձակվում կատու սպանել,- ես հակված եմ հավատալ դրան, հատկապես երբ տեսնում եմ, թե ինչպես է կատուն լվացվում պատուհանի մոտ։ Նա խորհրդավոր է ու մոտ այն տարօրինակ արարածներին, որոնց մարդիկ այլևս չեն կարող տեսնել։ Նա հին Եգիպտոսի ոգին է, նա, ով պահպանում է կորած քաղաքների, Մերի ու Օֆիրի հեքիաթները։ Նա ազգակիցն է ջունգլիների տիրակալի, հինավուրց ու սարսափազդու Աֆրիկայի գաղտնիքների հետնորդը։ Սֆինքսը նրա զարմիկն է, նա խոսում է զարմիկի լեզվով, բայց ավելի տարեց է նրանից ու հիշում է այն, ինչ նա նույնիսկ չի գիտեցել։

Ուլտարում, մինչև բուրգոմիստրերի կողմից կատուներին սպանելու արգելքը, ապրում էին աղքատ վարձակալն ու իր կինը, որոնց բավականություն էր պատճառում թակարդներ դնել ու սպանել հարևան կատուներին։ Թե ինչն էր նրանց այդպես վարվելու պատճառը, ոչ ոք չգիտե, հնարավոր է՝ ծայրահեղ ատելությունը կատուների գիշերային ձայների նկատմամբ, հնարավոր է՝ նրանց նեղում էր այն, որ կատուները կարող են զողություն կատարել իրենց բակում կամ այգում։ Բայց ինչն էլ որ լիներ ատելության պատճառը, ծեր ամուսինները բավականություն էին ստանում, որսալով ու սպանելով կատուներին, որոնք հայտնվում էին նրանց տնակի մոտ, իսկ գիշերով տարածվող ձայներից բնակիչները գլխի էին ընկնում, որ սպանությունը կատարվում է խիստ անսովոր ձևով։ Միայն թե նրանք չէին քննարկում դա ծերունու ու նրա կնոջ հետ, նրանց ծեր կնճռապատ դեմքերի արտահայտությունից էր դա, թե նրանից, որ նրանց փոքրիկ մռայլ տնակը թաքնված էր հսկա կաղնիների տակ, բակի խորքում։ Կատուների տերերի մեծ մասը ատում էր այդ տարօրինակ մարդկանց, բայց ավելի շատ վախենում էր, ու փոխանակ հանդիմանեին դաժան դահիճներին, մարդիկ ընդամենը հոգ էին տանում, որ իրենց սիրելի կենդանին չթափառի ու չմոտենա մութ ծառերի տակ թաքնված տնակին։ Երբ ինչ-որ մեկի անխուսափելի անուշադրության պատճառով կատուն կորում էր, ու խավարի մեջ տարածվում էին աղաղակները, կորցնողները անհույս հառաչում էին, կամ հանգստացնում իրենց, բախտին շնորհակալ լինելով, որ իրենց երեխան չի կորել։ Չէ որ հասարակ մարդիկ էին Ուլտարի բնակիչները և չգիտեին, թե որտեղից են հայտնվում կատուները։

Մի անգամ տարօրինակ օտարականների քարավանը հարավից մտավ դեպի Ուլտարի նեղ, խճաքարով ծածկված փողոցները։ Նրանք թուխ էին ու նման չէին այլ ճամփորդների, որ տարին երկու անգամ անցնում էին Ուլտարով։ Շուկայում նրանք արծաթի դիմաց բախտ էին գուշակում ու առևտրականներից վառ հուլունքներ գնում։ Թե որտեղից էին եկել օտարականները, ոչ ոք չգիտեր, բայց տեսել էին, որ նրանք կատարում են ինչ-որ տարօրինակ աղոթքներ ու զարդարում են իրենց ֆուրգոնները մարդկու մարմնով ու կատվի, անգղի, խոյի կամ առյուծի գլխով ինչ-որ արարածների պատկերներով։ Ու քարավանի առաջնորդը կրում էր մի գլխաշոր՝ երկու եղջյուրներով ու հետաքրքիր սկավառակով նրանց միջև։

Քարավանի հետ գալիս էր առանց հոր ու մոր մի փոքրիկ տղա, որի միակ ունեցածը փոքրիկ սև կատուն էր։ Ժանտախտը բարի չէր գտնվել տղայի հանդեպ ու նրան վիշտը մեղմելու համար թողել էր միայն փոքրիկ արարածին, բայց երբ դու այդքան փոքր ես, կարող ես շատ մեծ սփոփանք գտնել սև փիսիկի առույգ չարաճճիությունների մեջ։ Այնպես որ տղան, ում թուխ մարդիկ Մենես էին կոչում, խաղալով հրաշալի փիսիկի հետ զարդարված ֆուրգոնի մեջ, ավելի հաճախ ծիծաղում էր, քան լալիս։

Օտարականների՝ Ուլտարում իջևանելու երրորդ գիշերը Մենեսը չգտավ իր փիսիկին, ու քանի որ նա շատ բարձր էր հեկեկում շուկայում, բնակիչները ստիպված ասացին նրան ծերունու ու իր կնոջ, ու գիշերով լսված ձայների մասին։ Ու երբ նա լսեց դա, հեկեկոցները իրենց տեղը զիջեցին մեդիտացիային, իսկ հետո աղոթքներին։ Մենեսը ձեռքերը մեկնեց արևին ու սկսեց աղոթել մի լեզվով, որ հասկանալի չէր բնակիչներից ոչ մեկին, թեև, ճիշտն ասած, նրանք առանձնակի չէին էլ փորձում հասկանալ,- նրանց հայացքներն ուղղված էին երկնքին ու ամպերի ընդունած կերպարանքներին։ Խիստ տարօրինակ էր, բայց կարծես հենց տղան արտասանեց իր աղոթքը, ամպերը վերևում ընդունեցին ինչ-որ էկզոտիկ ծագման արարածի թափանցիկ, անորոշ կերպարանք, եղջյուրներին անցրած սկավառակով։ Բնությունը լի է նման խաբկանքներով, որոնք ցնցում են մեր երևակայությունը։

Գիշերը օտարականները լքեցին Ուլտարը, ու նրանց այլևս չտեսան։ Ու տանտերերը ապշած էին, երբ նկատեցին, որ ամբողջ քաղաքում հնարավոր չէ գտնել ոչ մի կատվի։ Օջախներից անհետացել էին սովորական կատուները, մեծ ու փոքր, սև, գորշ, շերտավոր, դեղին ու սպիտակ։ Ծեր Կրանոնը, բուրգոմիստրը, երդվում էր, որ թուխ ժողովուրդը վերցրել է կատուներին, այդպես վրեժ լուծելով Մենեսի կատվի սպանության համար, ու անիծում էր քարավանն ու փոքրիկ տղային։ Բայց Նիսը, նիհար նոտարը, հայտարարեց, որ ծեր վարձակալն ու նրա կինը ավելի հավանական կասկածյալներ են, կատուների նկատմամբ իրենց տխրահռչակ ատելության պատճառով։ Էլ չասած, որ ոչ ոք չէր համարձակվում դժգոհություն հայտնել սարսափազդու զույգին, նույնիսկ փոքրիկ Ատալը՝ հյուրանոցի տիրոջ որդին, ով երդվում էր, որ մթնշաղի մեջ տեսել է Ուլտարի բոլոր կատուներին ծառի տակ, անիծված բակում, դանդաղ ու մռայլ շրջաններով խրճիթի շուրջ քայլելով, երկու-երկու շարքերով, կարծես ինչ-որ չլսված ծես են կատարում։ Բնակիչները չգիտեին, ինչքանով կարելի է հավատալ նման փոքր երեխային, ու չնայած վախենում էին, որ մռայլ զույգը կարող է կախարդած լինել կատուներին, նախընտրեցին չհանդիմանել ծեր վարձակալին, քանի դեռ չեն հանդիպել նրան իր մութ ու վանող բակից դուրս։

Այդպես Ուլտարը ուղեվորվեց քնելու անզոր զայրույթի մեջ, ու երբ մարդիկ արթնացան, լուսաբացի հետ տեսան իրենց կատուներին, նստած օջախների վրա՝ մեծ ու փոքր, սև, գորշ, շերտավոր, դեղին ու սպիտակ։ Թվում էր, թե կատուները գիրացել են ու ավելի ուժեղ են փայլում։ Բնակիչները, խիստ զարմացած, քննարկում էին այդ իրադարձությունը։ Ծեր Կրագը պնդում էր, որ թուխ ժողովուրդը վերցրել էր նրանք, քանի որ կատուները ծերունու ու նրա կնոջ տնից ողջ վերադառնալ չէին կարող։ Բայց բոլորը համաձայն էին մի բանի հետ՝ կատուները հրաժարվում էին ուտել մսի սովորական բաժինը ու խմել ափսեով կաթը, ինչ շատ հետաքրքիր էր։ Ու երկու օր

Ուլտարի ծույլ կատուները, փայլելով, չէին մոտենում ուտելիքին ու միայն քնում էին կրակի մոտ կամ արևի տակ:

Անցավ մի ամբողջ շաբաթ, մինչև բնակիչները նկատեցին, որ երեկոյան ծառերի տակի տնակում լույս չի վառվում: Այդժամ նիհար Նիսը նկատեց, որ ոչ ոք չի տեսել ծերունուն ու նրա կնոջը այն գիշերանից, երբ կատուները կորել էին: Հաջորդ շաբաթ բուրգոմիստրը հաղթահարեց վախն ու որոշեց իր ծառայության կարգով այցելել տարօրինակ լուռ կացարանը, ամեն դեպքում իր հետ վերցնելով, որպես վկա, դարբին Շանգին ու քարի փորագրիչ Տուլին: Ու երբ նրանք կոտրեցին փխրուն դուռը, գտան միայն երկու մարմնից մաքուր անջատված կմախքներ հողե հատակի վրա ու մութ անկյուններում վխտացող միջատների:

Ավելի ուշ Ուլտարի քաղաքային խորհրդում շատերը խոսեցին այդ մասին: Զատը, հետախույզը, մանրամասն հարցաքննեց Նիսին, նիհար նոտարին, իսկ Կրանոնը, Շանգը ու Տուլը հարցախեղդ արվեցին: Նույնիսկ փոքրիկ Ատալը, հյուրանոցի տիրոջ տղան, հարցաքննվեց ու որպես պարգև քաղցրավենիք ստացավ: Նրանք պատմեցին ծեր վարձակալի մասին, նրա կնոջ, թուխ օտարականների քարավանի, փոքրիկ Մենեսի, նրա աղոթքի ժամանակ երկնքի, այն մասին, թե ինչ արեցին կատուները այն գիշերը, երբ քարավանը հեռացավ, ու այն մասին, թե ինչ գտան հետո ծառերի տակ թաքնված մռայլ բակի տանը:

Ու, վերջիվերջո, քաղաքային խորհուրդը ընդունեց զարմանալի օրենք, որի մասին խոսում էին առևտրականները Խատեգիում ու որը քննարկում էին ճամփորդները Նիրում, այն է, որ Ուլտարում ոչ մի մարդ իրավունք չունի կատու սպանել…